ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅ ԴՊՐՈՑՈՒՄ

(Հայ գրերի գյուտի, դպրոցի և դպրության 1600-ամյակի առթիվ)

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ս. Մ.

Գրերի գյուտը V դարում մեծագույն առաջընթացի սկիզբ եղավ՝ հզոր թափ հաղորդելով միջնադարյան Հայաստանի մշակութային կյանքին[1]: Այն նշանակալից եղավ նաև արցախահայության համար: Առաջին դպրոցներից մեկը, ըստ ավանդության, բացվեց Ամարասում՝ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով[2]: Այդ սրբավայրը 100 տարի առաջ կառուցել էր Գրիգոր Լուսավորիչը, և ուր ամփոփված էր նրա 15-ամյա թոռան՝ Մազքութների երկրում[3] զոհված Գրիգորիսի մարմինը: Միջնադարում Ամարասը դարձավ եպիսկոպոսական Աթոռ[4] (ժամանակ առ ժամանակ նաև՝ թեմական կենտրոն, որը տեղացիների համար նույնանում էր կաթողիկոսական նստավայրի հետ)[5]: Այն ավերվեց վայրագ Լենկթեմուրի հրամանով 1368 թ. և 1858 թ. վերաշինվելով՝ հրաշքով հասավ մեր օրերը:

387թ. Հայաստանի առաջին բաժանումից հետո կազմավորված Աղվանք աշխարհագրական նոր վարչատարածքն ընդգրկում էր հայոց Ուտիք, Արցախ աշխարհները[6] և տարբեր ժամանակներում՝ Փայտակարանի մի փոքր մասը: Այն տարածքով ու բնակչությամբ ավելի մեծ էր, քան բուն պատմական Աղվանքն իր Կապաղակ մայրաքաղաքով, և հայկական աղբյուրներում հիշատակվում է Հայոց Արևելից Կողմանք անվանումով: Նոր կազմավորման կենտրոնը Պարտավն էր (դրանից ավելի վաղ՝ Չողան)[7]: V դ. կեսերից կազմավորման հյուսիսային և արևելյան մասերն անջատվեցին (Մազքթաց, Բաղասական, Լփնիք և այլ աշխարհները), և մնացին բուն Աղվանքի մի փոքր մասն ու Հայոց Արևելից Կողմանքը:

Արաբական տիրապետության շրջանում հայ իշխանների ազդեցությունը երկրամասի տնտեսական և ռազմական կյանքում ավելի մեծացավ: Սակայն XI

---

[1] **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Գ, Ե., 1968, էջ 85-95:

[2] **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 211-212:

[3] **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983, էջ 35, 39:

[4] **Պետրոսյան Ե. քին.,** Հայ եկեղեցու պատմություն, հ. Ա, Էջմիածին, 1990, էջ 28, 54-55:

[5] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 470: Հայոց Արևելից Կողմանքի և Աղվանքի միաժամանակյա եպիսկոպոսապետերը հաճախ իրենց կաթողիկոս էին անվանում հատկապես 609 թ. Դվինի ժողովից հետո:

[6] **Աբրահամյան Ա.,** Անանիա Շիրակացու Մատենագրությունը, Ե., 1944, էջ 150-152, **Անանիա Շիրակացի,** Մատենագրություն, Ե., 1979, էջ 290-291, 294-296, **Հակոբյան Թ.,** Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., 1984, էջ 232-235, **Акопян А**., *Албания-Алуанк в греко-латинскких и древнеармянских источниках, Е., 1987, с. 13-16.*

[7] **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 118-119:

դարից սկսվեց սելջուկների հոսքը դեպի երկրամաս[8] ու հարակից տարածքներ, որին հետագա դարերում հաջորդեցին այլ թյուրքական ցեղերի արշավանքներն ու ասպատակությունները: Այդ ցեղերը տեղահանեցին բնիկներին և հաստատվեցին նրանց հայրենական տարածքներում[9]: Մ. Ուռհայեցին ցավով նշում է, որ նրանք պատուհաս եղան հայերիս համար՝ մեծ վնասներ պատճառելով մեզ[10]:

Կրթամշակութային ու կրոնական նշանավոր կենտրոն Ամարասից և առհասարակ Հայոց Արևելից Կողմանքից մշտապես քրիստոնյա քարոզիչները մեկնում էին հյուսիս ու արևելք՝ տարածելու քրիստոնեությունը: Այդ վկայում են նաև ասորի հեղինակները[11]: Ընդհանրապես երկրամասը կրոնական առումով միատարր դարձնելու Արշակունիների ջանքերը կարևոր նշանակություն էին վերապահում հատկապես Ամարասին, թեև ոչ երկրորդական դեր ունեին նաև Գանձասարն ու Դադիվանքը: Անհրաժեշտ էր, որ երկրամասի նորաբաց առաջին դպրոցում հնչեին Հայաստանի առաջին քրիստոնեական աղոթքներն ու երգերը, իսկ ուշիմ մանուկները սկսեին ուսանել սքանչելի գրերը՝ խորանալու գիտությունների ու արվեստների մեջ, հաղորդակցվելու աստվածաշնչյան գրքերին: Գիտենք, որ Մեսրոպն Աղվանից, Արսավաղ արքայի ու Երեմիա եպիսկոպոսի խնդրանքով հորինեց նաև աղվանական այբուբենը[12], որպեսզի աղվան ժողովուրդը ևս հաղորդակցվեր քրիստոնեության հետ: Այդ նպատակով նա մեկնեց նաև Բաղասական աշխարհ (Փայտակարան) և այնտեղ տեղապահներ նշանակելով՝ վերադարձավ: Հր. Աճառյանն իրավացիորեն Մաշտոցի հերթական այդ խիզախ ձեռնարկումն անվանում է *հինգերորդ քարոզչական գործունեություն*[13]: Սակայն աղվանական 26 այլալեզու ցեղերին այդպես էլ չհաջողվեց միավորվել և խոսել մեկ ընդհանրական լեզվով, իսկ այդ մշակույթին պատկանող գրավոր հուշարձանները չպահպանվեցին և այլ լեզուներով չթարգմանվեցին: Հրաշքով պահպանվեց միայն աղվանական մեսրոպյան այբուբենը՝ բաղկացած 52 գրերից[14]: Մշակութային լեզուն երկրամասում ըստ էության, եթե ոչ ամբողջությամբ, ապա գերակշիռ մասում, եղավ հայերենը:

Մաշտոց քաղաքական և կրոնական գործչի դերը կարևորվում էր նաև այն առումով, որ նա իր ստեղծած դպրոցական ցանցով և հայալեզու դպրության տարածմամբ միավորում էր Հայաստանի բոլոր մասերը[15], որոնք անջատվել էին մայր երկրից: Խոսքն այստեղ վերաբերում է ինչպես Արևմտյան Հայաստանին, ուր

---

[8] **Մատթէոս Ուռհայեցի,** Ժամանակագրութիւն, Ե., 1991, 16-23, 260 (Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Ե., 1990, էջ 141-142):

[9] **Աղբալեան Ն.,** Պատմութիւն հայոց գրականութեան, Ամբողջական երկեր, հ. 4, Պէյրութ, 1970, էջ 82-83, **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Գ, Ե., 1977, էջ 9-12, 56-76:

[10] **Մատթէոս Ուռհայեցի,** էջ 63:

[11] Ասորական աղբյուրներ, հ. Ա, Ե., 1976, էջ 313-317:

[12] **Կորիւն**, Վարք Մաշտոցի, Ե., 1980, էջ 110-111, Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ե., 1981, էջ 406-407:

[13] **Աճառյան Հր.,** Հայոց գրերը, Ե., 1984, էջ 213-23:

[14] Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 7117:

[15] **Պետրոսյան Եզ.** ք., Հայ եկեղեցու պատմություն, մ. Ա, Էջմիածին, 1990, էջ 36-37, Ամբողջական երկեր, հ. 4, Պեյրութ, 1970, **Աղբալեան Ն.,** էջ 311-315:

նա դպրոցներ բացեց բյուզանդական Թեոդորոս կայսեր (408-450) թույլտվությամբ, այնպես էլ հյուսիսային այս տարածքներին: Մաշտոցի կրթամշակութային գործունեությունը, ըստ Վ. Առաքելյանի, «ցույց է տալիս, թե Հայոց մեծ լուսավորիչը որքան էր շահագրգռված Հայաստանի ծայրագավառների վիճակով»[16]: Մաշտոցի մասին Կաղանկատվացու հաղորդածը կարևորվում է այն առումով, որ վկայում է նրա նկատմամբ ժողովրդի ունեցած սիրո մասին: Իսկ պատմիչը «ցանկանում» է, որ ուսուցչապետն Աղվանքում իր կյանքն ավարտած լինի: Ուստի, ըստ նրա, խորհրդավոր հանգամանքներում հեփթաղներին, գարգարացիներին և սարոս-տանցիներին դարձի բերելիս իր նահատակվող աշակերտների մեջ է[17] նաև Մեսրոպ Մաշտոցը: Իսկ հրաշապատումը դրա հնարավորությունը տալիս է: Ի հեճուկս կեղծ աղվանագետների՝ Մաշտոցի կրթամշակութային գործի ողջ փայլը արտացոլվեց նախ 7-րդ դարում ստեղծված երկու կոթողային ստեղծագործություն-ների երևան գալով. խոսքը Մովսես Կաղանկատվացու Պատմության և նրա մեջ ներառված Դավթակ Քերթողի «Ողբք ի մահն Ջևանշէրի» երկերի[18] մասին է: Երկու ստեղծագործություններն էլ գրված են դասական հայերենով: Դավթակի Ողբը գրված է ծայրակապի (ակրոստիքոսի) սկզբունքով, որը սքանչելիորեն ներառում է մաշտոցյան այբուբենի 36 տառերն իբրև գլխագրեր՝ անմահացնելով ոչ միայն Ջևանշերի փառքը, այլև մաշտոցյան աստվածային գյուտը[19]:

Լինելով հանճարեղ գիտնական ու թարգմանիչ՝[20] Մեսրոպ Մաշտոցը հայկա-կան միջավայրում մարմնավորեց ուսուցչի սրբազնագույն մի կատարելատիպ: Իր անձի մեջ նա խտացնում էր իմաստասեր-թարգմանչի, երաժշտագետ-վարդապե-տի, ինչպես նաև սրբախոսական ու գրական զանազան երկերի հերոսի ընդհան-րական կերպարները միաժամանակ: Մշակութային իր գործունեությամբ նա հան-դես էր գալիս որպես հեռատես և սթափ քաղաքական գործիչ: Այս մասին շատ է խոսվել: Նրա ջանքերը մասնավորաբար ուղղված էին Սասանյանների դեմ, որոնց ճնշումը գնալով մեծանում էր՝ դառնալով սպառնալի[21]:

---

[16] **Մովսէս Կաղանկատուացի**, էջ ԻԵ:

[17] Նույն տեղում, էջ 96-97: Սակայն մոռանալով աշակերտների անունից «զրուցատրաբար» ներկայացրածը՝ պատմիչը խոսում է Սահակի և Մեսրոպի՝ Վաղարշապատում մահկանացուները կնքելու մասին (նույն տեղում, էջ 118):

[18] **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Գ, էջ 409-412, 505-507:

[19] **Մովսէս Կաղանկատուացի,** էջ 225-230:

[20] **Աղայան Էդ.,** Մեսրոպ Մաշտոց, Ե., 1986, **Սնակ Գ.,** Հայկական գրի և մատենագրության սկզբնավորումը, Ե., 1967: Մարտիրոսյան Ա., Մաշտոց (պատմա-քննական տեսություն), Ե., 1982: Պետք է նկատի ունենալ նաև, որ այբուբենում Մաշտոցը ներառավ այնքան նիշեր, որոնք համապատասխանում էին աստղագիտական որոշ պատկերացումների՝ կապված և՛ նրանց թվաքանակի, և՛ թվային արժեքների հետ: Հնագույն դասական այբուբեններն ունեին 22, 24, 28, 30, 36 նիշեր (**Папюс, Каббала, М.,** *2003, с. 25,* **Պողոսյան Պ.,** «Եօթնագրեանք»-ի առեղծվածը և Դավիթ Անհաղթը, **Դավիթ Անհաղթ**, /հոդվածների ժողովածու/, Ե., 1980, էջ 143-210, նաև՝ այդ հոդվածում ներառած աղյուսակը):

[21] **Յուզբաշյան Կ.,** Մաշտոցի գործունեության քաղաքական բաղադրիչը, Հայ գրերի գյուտի և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակին նվիրված կրթական միջազգային գիտաժողով, Ե., 2005, էջ 4-6:

Գրերի գյուտը հեղաշրջեց հայ կյանքի գրեթե բոլոր կողմերը: Առանձնապես կարևորվեց յոթ ձայնավորների՝ Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի ստեղծումը՝ որպես մի մեծ իրադարձության[22]: Թվում է, թե դրանով ապահովվեց նաև հայ մշակույթի (շարականային տեքստերի) երաժշտական կողմը: Թերևս այստեղից է ծագում յոթ կամ ութ ձայնեղանակի հասկացությունը շարականային երգարվեստում: Ի վերջո, մաշտոցյան այբուբենն ապահովում էր հնչյունագրերի, երաժշտական եղանակների և թվերի ընդհանրական մի համակարգ՝ ընդգրկելով հայ կյանքի գրեթե բոլոր բնագավառներն անխտիր:

Մաշտոցը սիրելի էր ժամանակակիցների համար և այդպիսին մնաց սերունդների հիշողության մեջ[23]: Նրա անսահման ջանասիրության մասին տաղանդավոր սանը՝ Կորյունը, գրում է, թե երանելի Մաշտոցը, արքայի հրամանով և Սուրբ Սահակի համաձայնությամբ՝ մի խումբ մանուկներ առավ հետը և գնաց Ասորիքի կողմերը: Վերադարձն արգասավոր էր, ընդունելությունը՝ համաժողովրդական: Հայ եկեղեցին նպաստեց նաև Աղվանից ու Վրաց քույր եկեղեցիների բարեկարգությանը, և Մաշտոցը գրեր ստեղծեց նաև այդ ժողովուրդների համար՝ լուսավորությունը նրանց աշխարհներում տարածելու նպատակով[24]:

Մանկավարժության, գիտության, մատենագրության և այլ բնագավառների զարգացման համար Մաշտոցի կատարածը շարունակեցին նրա շնորհաշատ աշակերտներ Եզնիկ Կողբացին, Մովսես Խորենացին, Եղիշեն, Հովհան Եկեղեցացին և այլք: Ընդունված բարի ավանդները մի նոր աստիճանի բարձրացրին հետագա դարերի նշանավոր ուսուցչապետերը՝ Անանիա և Գրիգոր Նարեկացիները, Խոսրով Անձևացին[25], Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը և ուրիշներ[26]: Մեսրոպը և նրա համախոհները սերունդների կրթության ու դաստիարակության հետ էին կապում հայ ժողովրդի ապագան: Հանճարեղ ուսուցչապետերի նախաձեռնությամբ սկսում է գործել Վաղարշապատի մայր դպրոցը, որը լուծում է մասնագետների պատրաստման ու տեղում ուսման կազմակերպման կարևոր գործը:

Հարուստ ավանդներով հայ դպրոցի պատմության շատ հարցեր նոր լուսաբանման կարիք ունեն: Հայտնի է, որ V դարում գործում էր դպրոցի երեք տիպ՝ 1. *նախակրթարան,* 2. *վանական դպրոց* և 3. *վարդապետարան:* Դեռևս Ներսես Մեծի հիմնած հանրային նախակրթարանները մինչև 640-ական թվականները շարունակում են գոյություն ունենալ՝ գործելով ամենուր: Հետագայում այս դպրոցը վերանում է, և նրան փոխարինում է առտնին (վանականների տանը կից գրել-կարդալ սովորեցնող) դպրոցը: Իսկ վանական դպրոցներ Մաշտոցը բացում է նաև Սյունիքում, Գողթնում (Շարուրում) և, ինչպես ասվեց՝ Արցախի Ամարասի վանքում ու այլուր: Արաբական տիրապետության շրջանում՝ VII-IX դդ., վանական

---

[22] **Պողոսյան Պ.,** նշվ. աշխ., էջ 201:

[23] **Մուրադյան Ս.,** Գրական հանգրվաններ, հ. Ա, Ե., 2003, էջ 408-420:

[24] **Կորիւն,** Վարք Մաշտոցի, էջ 110-111, 118-119, **Աճառյան Հր.,** Հայոց գրերը, Ե., 1984, էջ 213-223:

[25] **Թամրազյան Հ. Հ.,** Նարեկյան դպրոցը, Ե., 1999, էջ 5-104:

[26] **Տեր-Մկրտչյան Գ.,** Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1979, էջ 219-224:

դպրոցը շատ դժվարությամբ, բայց շարունակում է գոյատևել: 885 թ. պետականության վերականգնումից հետո կյանքն աստիճանաբար վերափոխվում է, և դպրոցի այս տիպը (վանական) մեծ զարգացում ու տարածում է գտնում: Այսպիսի դպրոցներ են բացվում Բջնիում, Կեչառիսում, Խոր Վիրապում, Մշո Գլակա ու Առաքելոց վանքերում, Նարեկա վանքում և այլուր: Ըստ իրենց յուրահատկության՝ նրանք *միջնադաս* և *բարձրադաս* էին: Բարձրադաս վանական դպրոցներ էին թեմական կենտրոններում գտնվողները[27]: Հետևաբար նման կարգավիճակ ուներ նաև Ամարասը:

Սկզբից եթե բարձրագույն դպրոցի (վարդապետարանի) կարգավիճակ ունեին երկուսը. 1) Վաղարշապատի մայր դպրոցը 478 թ. տեղափոխվում է Դվին՝ Կաթողիկոսարանն այնտեղ տեղափոխելու պատճառով: Հզորանում է Դվինի նորաբաց դպրոցը, և թուլանում՝ Վաղարշապատում պահպանվածը. 2) Էապես առաջադիմում է նաև Սյունյաց Շաղիտա ավանում գործողը[28]:

Ամենացածրակարգ դպրոցը նախակրթարանն էր: Այն սկսում էր հայոց լեզվի (գրել և կարդալ), Ս. Գրքի, համարողության և երգեցողության ուսուցմամբ: Վանական դպրոցը, նշվածներից բացի, ուսուցանում էր աստվածաբանություն, գրչություն և եռյակ գիտությունները (քերականություն, ճարտասանություն և դիալեկտիկա): Վարդապետարանում դասավանդվում էին նաև քառյակ գիտությունները (թվաբանություն, երկրաչափություն, աստղագիտություն և երաժշտություն):

X դարում քաղաքացիություն են ստանում համալսարանները, որոնցում կային առանձին բաժանմունքներ (ֆակուլտետներ): Գլաձորի և Տաթևի համալսարաններն ունեին երեքը՝ երաժշտության, նկարչության, ներքին ու արտաքին գիտությունների (ներքին՝ կրոնաաստվածաբանական առարկաներ, արտաքին՝ յոթնյակ գիտություններ գումարած տարրագիտություն, աղբյուրագիտություն, մարդակազմություն, հայրենական պատմություն)[29]:

Հայ գրականությունն ուսումնասիրվում էր հարակից այնպիսի առար-կաների հետ, ինչպիսիք էին ճարտասանությունը, քերականությունը և պատմությունը: Վերջինս կարևոր էր հատկապես աղբյուրագիտական իմաստով: Իսկ դպրոցներին կից գրեթե ամենուր անհրաժեշտաբար սկսում են հիմնել գրադարաններ, թեև դրանք կային նաև V-IX դարերում՝ իրենց գրչական կենտրոններով:

Միջնադարյան Հայաստանում ու Կիլիկիայում Վերածնության տարածումով, քաղաքային կյանքի զարգացման ու կյանքի աշխարհիկացման պայմաններում բացվում են բազմաթիվ ճեմարաններ ու համալսարաններ: Այդպիսիք էին Անիի (XI-XIII դդ.), Կարսի (XI-XII դդ.), Տաթևի (XIV-XV դդ.), Սսի (XII-XIV դդ.), Գլաձորի (XIII-XIV դդ.) և այլուր բացված բարձրագույն դպրոցները[30]: Այս շրջանում դեռևս դժվար է զանազանել բարձրադաս վանական և համալսարանական տիպի դպրոցները: Միջնադասը և բարձրադասը (թերևս՝ համալսարանը) տարբերվում էին իրենց որոշ ծրագրերով միայն: Միջնադասում կրոնական առարկաներից հետո

---

[27] **Ջուհարյան Թ.**, Հայ գրականության մեթոդիկա, Ե., 1980, էջ 9-16:

[28] Նույն տեղում, էջ 13:

[29] Նույն տեղում, էջ 19-20:

[30] Նույն տեղում, էջ 19, Խաչերյան Լ., Գլաձորի համալսարան, Ե., 1973, էջ 6-10:

ուսուցանվում էին յոթ ազատ արվեստները, իսկ բարձրադասներում՝ նաև գրչության արվեստ, ճարտարապետություն, մարդակազմություն և տրամաբանություն: Թեև դա էլ սահմանազատիչ դեր ունենալ չի կարող, քանի որ ուսումնական այս խոշոր կենտրոններն անընդհատ կատարելագործում էին իրենց ծրագրերը, օգտագործում առաջավոր փորձը (նաև ծրագրերի ընդօրինակման իմաստով), մրցակցում իրար հետ, արագ առաջադիմում:

Հայ իմաստասերները տիրապետում էին մի քանի լեզուների և առարկաների, որոնք դասավանդում էին շատ դպրոցներում: Նշանավոր գիտնականները հատուկ գավազան էին ստանում, և դա նշան էր նրանց վարդապետական բարձր աստիճանի, ինչը շնորհվում էր Հայ եկեղեցու կողմից՝ իր դավանանքը քարոզելու և մեկնելու համար[31]:

Միջնադարյան հայ աշխարհիկ մտքի և գիտամանկավարժական կյանքի նշանավոր դեմքերից մեկը Գրիգոր Մագիստրոս Պահլավունին է (990-1058): Հայտնի քաղաքական և ռազմական գործիչն իր բազմազբաղ կյանքում ճիշտ Մաշտոցի պես զարգացրել է նաև հայ դպրոցն ու մանկավարժական միտքը[32]: Նա տարբեր ժամանակներում դասավանդել է Անիի, Բջնիի, Կեչառիսի, Սանահնի և Հաղպատի համալսարաններում, իսկ 1043-ից հետո Սուրբ Կարապետի ու Դարոյնքի սեփական ճեմարաններում՝ ամենուր կյանքի կոչելով մինչ այդ անհայտ առարկաներ, փոխելով եղածների բովանդակությունը[33], կատարելագործելով ուսուցման մեթոդները: Գրիգոր Մագիստրոսի կյանքն ուշագրավ է նաև մի այլ տեսանկյունից: Երկար ժամանակ, երբ Արարատյան հայրապետական թեմը տեղափոխվեց Բջնի՝ Պահլավունյաց իշխանանիստի՝ որպես թեմական կենտրոնի սահմանները հասնում էին մինչև Վայկունիք և ներառում նաև Ծար գավառը՝ համանուն ավանով[34], ինչը վկայում է մայր երկրի հետ երկրամասի անմիջական կապի մասին:

XI դ. նախ ուսուցանվում էր Աստվածաշունչը՝ Հին և Նոր Կտակարանները, առասպելավարժություն և ընտիր գրականության նմուշներ (Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, ինչպես և անտիկ հեղինակներ): Հետո դրանք լրացվում էին յոթնյակ գիտությունների առարկաներով:

Մագիստրոսն իր սաների մտքի զարգացման համար օգտագործել է վարժանքի տարբեր ձևեր՝ սկսած հանելուկատիպ ոչ թվաբանական խնդիրների առաջադրումից՝ վերջացրած թվաբանականներով: Նա խրախուսել է պատանիների ստեղծագործական հմտությունների զարգացումը, նրանց սովորեցրել է տաղեր գրել, արտասանել դրանք և այլն[35]: Իսկ արևելյան ժողովուրդների մեջ բանաստեղ-

---

[31] **Երտրմեան Տ. ծ. Վ.,** «Վարդապետ»-ը Հայ եկեղեցական մտածողութեան մէջ, Վենետիկ, 2001, էջ 31-89:

[32] **Խաչերեան Լ., Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս,** Լոս-Անջելես, 1987, էջ 259:

[33] **Մխիթարյան Ս.,** Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, էջ 26-31:

[34] **Մխիթարյան Ս.**, Մագիստրոսյան սկզբնաղբյուրներն Աղվանք աշխարհի և Ծար (Քելբաջար) գավառի մասին (Բանբեր Երևանի համալսարանի, 1996, N 3, էջ 154-158):

[35] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 33-34 (այսուհետև՝ Թղթեր):

ծություն գրելը շատ տարածված էր նաև կենցաղում: Գրելու դժվարին արվեստը նշանավոր գրագետները վաղ հասակից էին սովորեցնում մանուկներին: Կար հասակային տարբերության խնդիրը, որը հաշվի էր առնվում հայկական միջադաս և բարձրադաս դպրոցում: Գրիգոր Մագիստրոսի առումով կարելի է ասել, որ նա դպրոցական ուսուցման գործընթացում նախընտրելի եղանակ է համարում նվիրական գաղափարները և ազնիվ զգացմունքները զանազան ձևերով (նաև բանաստեղծությամբ) մատուցել սաներին: Այս դեպքում այդ դերում հանդես է գալիս իր որդին, որին նվիրված է «Առ որդին իւր զօրանալ» տաղը. այսպես.

Աղէ՛ զինեա՛, զինուորեա՛, սպառազինեա՛, դու վառեա՛.
Արիաբար դու մրցեա՛ ի հանդիսի ստադին....[36]

Հայրենասիրական դյուցազնական քաջ ոլորյալ տաղի գրության սկզբունքները մեկնաբանելիս նա հորդորում է չվախենալ թշնամուց, չփախչել, այլ արիաբար մարտնչել, ինչպես հերոսական նախնիները: Հ. Բարթիկյանի կարծիքով այս տաղը նվիրված է 1042 թ. Անիի դեպքերին, երբ բյուզանդացիները հարձակվեցին քաղաքի վրա, և սպարապետ Վահրամ Պահլավունուն հաջողվեց վտանգը չեզոքացնել[37]: Պայքարն ուղղված էր բյուզանդացիների դաժան զորահրամանատար Ահարոն Բուլղարի դեմ:

Պահպանվել են Մագիստրոսի երկու աշակերտների՝ Բարսեղի և Եղիսեի անունները[38]: Իր աշակերտի ու որդու՝ հետագայում կաթողիկոս օծված Գրիգոր Վկայասերի (1066-1105) խնդրանքով հայրը գրում է «Քերականի մեկնություն» նշանավոր աշխատությունը, որը դարեր շարունակ հայկական դպրոցներում ծառայել է որպես դասագիրք[39]: Հայ ուսուցիչ-իմաստասերները մշտապես մտահոգված են եղել դասագրքերի ստեղծմամբ, իրենց աշակերտների ճակատագրով[40]:

Դժվար չէ նկատել, որ հմուտ մանկավարժն ստեղծագործելիս թեմաները համադրում է՝ նյութի ուսուցումը դյուրացնելու համար: Նա բարձր է գնահատում Մեսրոպ Մաշտոցի կատարածը՝ դրա մեջ տեսնելով մշակութային մեծ խորհուրդ, արժեքավորելով առաջին թարգմանիչների անուրանալի աշխատանքը.

Զգիւտն իմաստութեան և զարուեստի նոր հանճարին,
Զգիր մերոյ ազգին, ըզՎրացւոյ և զԱղուանին,
Առեալ նշանեցին, զարմանալի թարգմանեցին,

---

[36] Նույն տեղում, էջ 234:

[37] Էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության (հոդվածների ժողովածու), Ե., 1971, էջ 68-72:

[38] **Աբեղյան Մ.,** Երկեր, հ. Դ, Ե., 1970, էջ 37:

[39] **Адонц Н.,** *Дионис Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 221-249,* **Ջահուկյան Գ.,** Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում 5-15-րդ դդ., Ե., 1954, էջ 61:

[40] **Աբովյան Խ.**, Առ բարեսնունդ և սիրելի աշակերտս իմ, Երկեր, հ. 7, Ե., 1956, էջ 39-40:

Առաւել նորոգեցին և լուսաւոր յորինեցին[41]:

Համաքրիստոնեական ընդհանուր ձեռքբերումների մեջ մեր մեծերի կատարածը գնահատված է իբրև հայ և հարևան ժողովուրդների մշակութային կյանքում կարևոր ներդրում: Հասկանալիորեն կատարվածը նպաստում էր Աստծո խոսքի տարածմանը: Իսկ դա անմնացորդ նվիրում էր պահանջում: Մասնավորաբար խոսքը վերաբերում է նաև Աղվանք աշխարհին, որի բարօրության ու առաջադիմության նախանձախնդիրն էին հայ գործիչները և մասնավորաբար Մեսրոպ Մաշտոցն ու Գրիգոր Մագիստրոսը: Հայոց Արևելից Կողմանց դպրոցները բացառապես հայկական էին ու հայալեզու, քանզի բացված էին հայ երեխաների համար, իսկ հյուսիսային մասերում, ինչպես ասվեց, հիմնականում հայերենով էին ուսանում նաև աղվան մանուկները:

Գրականության ուսուցողական ուղղվածությունն ու խրատաբանական ոգին բխում էր Աստվածաշնչից: Ժամանակի մեծերը սիրում էին խրատել մեծին ու փոքրին, քանզի յուրաքանչյուրն իր տեղում ուներ դրա կարիքը: Հատկապես չէին հանդուրժում ուսումնական մարդկանց տգիտությունը և անտեղյակությունը[42]: Մի հույն իմաստասերի՝ Կիրակոս դպրին, Գրիգոր Մագիստրոսը հանդիմանում է բժշկագիտության մեջ իմաստասիրել չկարողանալու պատճառով[43], իսկ անհայտ մի գիտնականի էլ այն պատճառով, որ նա չգիտի մտավոր մրցության կարևորությունը: Նա խնդրում է այդպիսի դեպքերում զգուշանալ սխալվելուց, այլապես սրանից հետո «հակաճառութիւն ի մէնջ զտցես հռետորական ճարտասանել զՊիւթագորայն և զՄանինտոսին»[44]: Գործընկերներն իրենց սաներին զգաստությամբ ուղիղ ճանապարհով պիտի տանեն ու փորձ ձեռք բերեն:

Այսպիսով, V-XI դդ. հայկական դպրոցը, որոշ վայրիվերումներով հանդերձ, ունեցավ էական առաջընթաց՝ պահպանելով մաշտոցյան ավանդները և ունենալով լուրջ ձեռքբերումներ: Այդ զարթոնքը նշանավորվեց Հայկական վերածննդով[45]: Հիշյալ նվաճումներին անմասն չի մնացել նաև Արցախ աշխարհը: Այնտեղ ևս գործել են գրչության և ուսումնական կենտրոններ, զարգացել է մշակութային կյանքը: Ամարասը, Գանձասարն ու Դադիվանքն արդեն V դարից գիտամշակութային խոշոր կենտրոններ էին և գործում էին համահայկական մտավոր դաշտում: Մինչև 1920-ական թվականները նրանք երբեք մեկուսացված չեն եղել

---

[41] Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868, էջ 72-73: Նկատենք, որ X-XI դդ. հեղինակներն աղվանից և վրաց գրերի ու մշակույթի սկզբնավորող են համարում Մեսրոպ Մաշտոցին:

[42] **Աւետիսեան Զ.,** Մարդը Ե դարի հայ գրականության մէջ, Անթիլիաս, 1994, էջ 119-128:

[43] Թղթեր, էջ 114-116:

[44] Նույն տեղում, էջ 233:

[45] **Չալոյան Վ.,** Հայկական ռենեսանս, Ե., 1964, էջ 6-12, **Թամրազյան Հ.** Ս., Հայ քննադատություն, Ե., 1985, էջ 25-50, **Նալբանդյան Վ., Ներսիսյան Վ., Բախչինյան Հ.,** Հայ միջնադարյան գրականություն (համառոտ պատմություն), Ե., 1986, էջ 67-103:

կրոնաքաղաքական և մշակութային աշխարհից՝ մասնակից լինելով բոլոր համազգային կարևոր ձեռնարկումներին:

ТРАДИЦИИ МАШТОЦА В АРМЯНСКИХ ШКОЛАХ

(К 1600-летию создания армянской письменности и школы)

МХИТАРЯН С. М.

Резюме

Деятельность Месропа Маштоца связана как с духовной и культурной жизнью армянского народа, так и народов Грузии и *Кавказской Албании*. Маштоц основал школу в Амарасе, которая была первой в Арцахском мире. Педагогическую деятельность просветителя продолжили его ученики и другие выдающиеся деятели армянского средневековья. Одним из них в XI веке был Григор Магистрос, гимназия которого была одной из передовых школ средневековья. Проблема создания Маштоцем албанской письменности, а также вопросы, касающиеся письменных памятников (рукописей), найденных в грузинских источниках, представляют большой интерес как для албановедения, так и арменоведения.